



ԱՐԱՐԱՏԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ARARAT

ՀՀ Արարատի մարզ, ք.Արարատ,
Շահումյան փ. 34 ,
հեռ (+374) 93 060907
Էլ. փոստ info_ararat@aarhus.am
ripsime-84@mail.ru

Region of Ararat
Shahumyan 34
Tel. (+374) 93 060907
E-mail info_ararat@aarhus.am
ripsime-84@mail.ru

ՀՀ առողջապահության
Նախարար պարոն
Ա. Մուրադյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Արարատի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին

1. Արարատի «ԳեոՊրոՄայնինգ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող պոչամբարը ունի արդյոք սանիտարական պահպանության գոտի.եթե այո, ապա ի՞նչ չափով է այն
2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից կատարվել են արդյոք ուսումնասիրություններ կամ վերլուծություններ «ԳեոՊրոՄայնինգ» ՍՊԸ-ի պոչամբարի առողջապահական ռիսկերի վերաբերյալ. եթե այո, ապա տրամադրել պատճենները
3. Նախատեսվում են արդյոք Արարատի մարզում «ԳեոՊրոՄայնինգ» ընկերության կողմից շահագործվող պոչամբարին հարակից բնակավայրերում առողջապահական ծրագրեր

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝
Արարատի Օրհուս կենտրոնի համակարգող

Հռիփսիմե Սարգսյան

15.5.2015թ.
